«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

ՀԵՂԻՆԱԿ ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍՅԱՆ

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ/ ԴԱՍՎԱՐ

ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴՊՐՈՑ ՎԱՀԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄ ---------- 5

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ---------- 8

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ---------- 16

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ---------- ---------- 24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 33

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ---------- 35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ընթերցանությունը պատուհան է, որի միջոցով երեխաները տեսնում ու ճանաչում են աշխարհը և իրենց իրենց»:

Սուխոմլինսկի

Ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելն անհրաժեշտություն էր: Այսօր պատկերը բոլորովին այլ է: Սովորողների ընթերցասիրությունը նվազել և նվազում է տեղեկատվական աղբյուրների ազատությունից:

Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արհատայտիչ ընթերցողական ունակությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ:

Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստացույցը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղեր ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ուսուցչի՝ մասնավորապես տարրական դասարանների ուսուցչի առջև մեծ խնդիր է դրվում երեխաների մեջ ձևավորել հետաքրքրության ընթերցանության նկատմամբ: Տարրական դասարաններում ընթերցանությունը հիմք է համարվում հետագայում գրականության նկատմամբ հետաքրքրությունների զարգացման, բառապաշարի հարստացման, լայն աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման համար: Ուսուցման մեջ պետք է բարձրացնել աշակերտների ակտիվությունը, մասնավորապես՝ դասերը աշակերտակենտրոն սկզբունքով վարելիս երեխաների ակտիվության և հետաքրքրությունների շրջանակը մեծանում է:

Թեմայի ***արդիականությունը*** պայմանավորված է այսօր ընթերցանության նկատմամբ նվազմամբ, գրաճանաչության ընթացքում հետաքրքրությունների ձևավորման համար առկա մեթոդների և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնող խաղերի կիրառման արդյունավետությամբ:

Մեր ուսումնասիրության ***նպատակն*** է մշակել և ներկայացնել մեթոդական ցուցումներ, որը գրաճանաչության ընթացքում կձևավորի ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունը:

Հետազոտական աշխատանքի թեմայով պայմանավորված՝ մեր առջև դրել ենք հետևյալ ***խնդիրները***.

1. Ուսումնասիրել մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ և ծրագրեր:

2. Մշակել, թե ինչպես ստեղծել և նպաակսլաց փոխկապակցել կարդալու սկզբնական ունակության ձևավորման մի շարք նախադրյալներ:
3. Ուսումնասիրել, թե որքանով է ընթերցանությունը զարգացնում կապակցված խոսք կառուցելու ունակությունը:
4. Մշակել ընթերցելու տարրական ունակության ձևավորման դժվարությունների հաղթահարմանը միտված գրաճանաչության ընթացքում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորող մեթոդական ցուցումներ:

ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄ

Վաղ մանկությունից երեխայի մեջ առաջանում է կարդալու ցանկություն, նա կարող է վերցնել որևէ թուղթ, արտաբերել ինչ-որ հնչյուններ, և նմանակելով իր տեսած ու ճանաչած մարդկանց, փորձել «կարդալ»: Դա նրան հաճույք է պատճառում, որովհետև այդպես նա իրեն մեծ է զգում՝ ամենևին չպատկերացնելով այն դժվարությունները, որոնք դեռ պիտի հաղթահարի՝ կարդալ սովորելու համար: Այդ ցանկությունը ունակություն է դառնում միայն այն ժամանակ, երբ երեխան ճանաչում է տառերը և կապակցում: Այդ ճանապարհը դժվարին է ու երկարատև և ուցուսչից պահանջում է համբերություն, հետևողականություն, քայլերի հստակ գիտակցում ու պլանավորում:

Առաջին դասարանում հենց առաջին օրերից կամակերպվում են բազմաբնույթ աշխատանքներ, որոնք նախապատրաստում են կարդալու և գրելու ուսուցումը, որպեսզի բուն կարդալն ու գրելը դժվար չընթանան:

Կարդալը մտավոր գործունեություն է, որը երեխայից պահանջում է տեսողական, լսողական և մտածական մտածողությունների զարգացում: Երեխայի համակարգված ուսուցում սկսվում է իր կյանքի առաջին գրքի՝ «Այբբենարանի» առաջին իսկ էջերից:

Բացվում է պատկերազարդ գիրքը, և երեխան հանդիպում է նկարների, որոնք էլ սովորում է «կարդալ»: Բավականին դժվար աշխատանք է նկարն ընկալելը և պատմելը: Դրա համար անհրաժեշտ է երեխայի մեջ մշակել ոչ միայն պարզապես տեսնելու, այլև տեսածը սյուժետային հաջորդականությամբ վերարտադրելու ունակություն: Մինչ հնչյունագրին անցնելը ուսուցչի խնդիրն է՝ սովորեցնել նկար «կարդալը», պահպանել նկարի սյուժետային կապերը, տեսնել դրանց հերթագայությունը: Այս փուլում քայլերի հաջորդականության պահպանմանը հետևելով՝ այբբենական շրջանում արդեն երեխան ուշադիր կլինի տառերի հաջորդականության հանդեպ և օրեցօր կկարողանա տառերը ճիշտ կապակցել ու անսխալ համադրություններ անել: Այս սկզբունքը նաև մեծ դեր ունի անձի կայացման գործում. ուսուցչի ամենօրյա հետևողականությամբ երեխան այն կդարձնի կենսակերպ և այդպես կփոքրացնի բոլոր տեսակի սխալների քանակը, որովհետև քայլերի հաջորդականության պահպանելը զարգացնում է տրամաբանական մտածողությունը, իսկ դրանով առաջնորդվելը պաշտպանում է շատ անհարկի սխալներից: Ներկայացնենք նախագրային փուլում կազմակերպվող ուսումնական գործունեության այն կողմերը, որոնց կարևորումը և հետևողականորեն շեշտադրումը կնպաստեն երեխայի կարդալու գործընթացի արագացմանը:

1. Պետք է հղկել երեխայի տեսնելու ունակությունը, որովհետև դրա «մեղքով» շատ հաճախ հաղթահարվում են մտածական մյուս գործողությունները: Եթե դասագրքի որևէ նկարում պատկերված մարդու դեմքի արտահայտությունը սխալ մեկնաբանվի, ապա հաջորդ նախադասությունը բոլորովին այլ իմաստ կստանա: Կարևոր է հենց առաջին դասարանից «ճիշտ տեսողություն», այսինքն՝ տեսողական մտածողություն մշակելը, որպեսզի այն հետագայում օգնի ուսումնական այլ հարցերում ևս: Իսկ երեխան «լավ» կամ «ճիշտ» տեսնում է այն դեպքում, երբ չի կարողանում պատկերն ամբողջությամբ ընկալել, այսինքն՝ ձևավորված չէ նրա տարածական մտածողությունը:
2. Մաթեմաթիկայից երեխան ուսումնասիրում է վերև, ներքև, աջ, ձախ, կենտրոն հասկացությունները: Ուստի նա կարող է նկարը տեսնել բոլոր կողմերից: Դա չափազանց կարևոր է՝ կարդալու գործընթացը հեշտացնելու համար: Ինչքան մեծ տիրույթ ընդգրկի երեխայի տեսողությունը, այնքան հեշտ կլինի կարդալը: Չէ որ տառերի կապակցությունը ևս պատկերներ է, և շատ հաճախ երեխաները բառը միանգամից չեն տեսնում, որովհետև ձևավորված չեն նրանց տեսողական և տարածական մտածողությունները: Հետևաբար ուսուցիչը նկարների շուրջ տարվող աշխատանքներին պիտի վերաբերվի ոչ միայն որպես բառապաշարի հարստացման կամ կապակցված խոսք ձևավորելու միջոցի, այլև կարդալու գործընթացը նախապատրաստելու կարևորագույն գործոնի: Որքան պատկերի ընկալման տիրույթը մեծանա,այնքան կարդակլու գործընթացը կհեշտանա: Կան մեծ և փոքր պատկերներ, դրանց ընկալումը կնպաստի մեծատառերի և փոքրատառերի ուսուցմանը:
3. Տեխնոլոգիայի և կերպարվեստի դասաժամերի ճիշտև արդյունավետ անցկացումը նպաստում է կարդալու ուսուցման ավելի սահուն և արագ կամակերպմանը, այդ բոլոր առարկաները այլ գործառույթների հետ մեկտեղ ձևավորում են սովորողի տարածական և տեսողական մտածողությունները: Երեխան գծում է, նկարում, կտրում, պատկերներ կառուցում, ճանաչում հեռուն ու մոտիկը, վերևն ու ներքը, այսինքն «Տեսողություն է բացում»:
4. Ձննուներով ուղեկցվող առարկայական դասերը, դիտումները, էքսկուրսաները ևս պիտի լինեն նպատակային. Ուսումնական այլ խնդիրների հետ մեկտեղ դրանք նպաստելու են երեխաներիկ տարածական և տեսողական մտածողությունեևրի զարգացմանը: Այսինքն պետք է ձևավորել «ընթերցանության դաշտ»: Տարածության մեջ կողմնորոշվելու կարողություններ ձևավորումը հանգեցնում է տեսողական կոմնորոշման, երբ երեխան կարողանում է միանգամից տեսնել վերևն ու ներքևը, մի հայացքով ընդգրկել բավականին մեծ տարածք: Այդ ուղղությամբ կարելի է

կազմակերպել խաղեր, որոնք կարդալու փուլում արդեն քայլ առ քայլ կնպաստեն բառի ամբողջական ընկալմանը՝ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ:

Առաջին դասարանում ոչ մի քայլ ինքնանպատակ չէ. յուրաքանչյուր գործողություն հող է նախապատրաստում հաջորդ քայլի համար: Մինչև ուսուցիչը լավ չտեսնի ամբողջը (դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը), չի կարողանա մասերը (առանձին դասերը) ճիշտ համակցել:

Ուստի ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ այսօրվա իմաստավորված քայլը վաղվա հաջողության նախադուռն է:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Գրաճանաչությունն ուսուցման նախնական շրջանն է, այս շրջանում շատ է հոգ տարվում ծանոցաթնելու տառերին, քան թե կարդալու տեխնիկայի տիրապետմանը, մինչդեռ հենց այդ շրջանում սկիզբ է դրվում կարդալու տեխնիկայի մշակմանը, ուստի պետք է հավասարաչափ հոգ տանել թե՞ տառուսուցմանը, թե՞ կարդալու տեխնիկային»:

Հայ մեծանուն մանկավարժ՝ Ա. Ղարիբյան

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դպրոցի մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու ունակությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակության շուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն:

Արդի տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց՝ նվազել է երեխաների՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը: Ընթերցանության նպատմամբ հետաքրքրություն պետք է ձևավորել դեռևս գրաճանաչության շրջանում: Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Ընթերցանության դասը առաջին դասարանում ունի իր առանձնահատկությունները, բացատրական ընթերցանությանը երեխաներին նախապատրաստելը համարյա ամբողջությամբ իրականացվելու է դասագրքի նյութերի ուսումնասիրության անհամեմատ կարճ տևողության ընթացքում, քանի որ գրաճանաչության հետայբբենական շրջանը ևս շատ կարճ է:

Ընթերցանության նպատակներն ու խնդիրները

Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական նպատակն է՝

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու ունակությունները (որակական հատկանիշների պահպանմամբ),
- մաքրել, հղկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակությունը,
- ձևավորել հաղորդակցական ունակություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,

- ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը՝ գաղափարը, հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու ունակություններ,
- ձևավորել ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտության գիտակցություն, դրանցով կյանքում առաջնորդվելու ունակություն, զարգացնել արժեհամակարգը և դաստիարակել նրա բաղադրիչները պահպանելու ու հարստացնելու պահանջմունք,
- նպաստել իր բնակավայրի և այնտեղ ապրող մարդկանց զբաղմունքի, մշակութային արժեքների մասին գիտելիքների ձեռքբերմանը,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը,
- աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով ձևավորել պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին, պայմաններ ստեղծել երեխաների իրավունքների ու պարտականությաունների մասին գիտելիքների ձեռքբերման և դրանք գործածելու ուղղությամբ ունակությունների մշակման համար,
- ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը, ձևավորելով համագործակցային ունակություններ, համակեցության որակներ,
- սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները (գիտելիքները, փորձը, ձեռքբերումները), գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

«Այբբենարանի» հիմնական նպատակը երեխաների՝ կարդալու և գրելու հմտությունների ձևավորումն է ու զարգացումը: Նպատակին հասնելու համար դասագրքում կիրառվում են մի շարք միջոցներ: Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Նրա մեջ են ամփոփված ու նրա միջոցով են իրականացվում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական, տարրական գիտելիքների պահանջները:

Ըստ ամենափորձված մեթոդի՝ որևէ բան լավ անելու համար այդ բանը շատ անել է պետք: Օրինակ՝ մարզիկը հարյուրավոր անգամ կատարում է նույն վարժությունը, յուրաքանչյուր անգամ հղկում ու մշակում է այն: Այդպես է նաև կարդալու պարագայում. երեխան պետք է շատ կարդա, որ կարողանա լավ կարդալ: Կարդալու կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Ամենակարևոր գործոններից մեկը հասկանալով կարդալն է, որին պետք է հասնել դարձյալ աստիճանաբար: Երեխան պետք է ընկալի իր կարդացածի իմաստը, կարդացածը պետք է հետաքրքրի նրան: Հասկանալով ընթերացանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Երեխաներին պետք է տրվեն այնպիսի առաջադրանքներ, որ երեխան կարդա առանց հարկադրանքի, հաճույքով: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը դառնում է պայման: Կարդալու հմտությունն իր մեջ ներառում է խոսքային միավորի տեսողական պատկերի՝ բառ, բառակապակցություն, նախադասություն և նրա խոսքաշարժողական կառույցի հարաբերությունը:

Ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք՝

- խորհեն ընթարցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, սիրո ու ատելության, բարու և չարի, մարդու հնարավորությունների ու աշխարհում նրա տեղի մասին: Հարկավոր չէ տրամադրել նրան, թե ինքը դեռևս փոքր է: Միաժամանակ պետք չէ նրան վախեցնել կամ բարդացնել նրա կյանքն այդպիսի հարցերով: Ժամանակակից երեխան իր ճանապարհին հանդիպում է լուրջ խնդիրների: Որքան շուտ սկսի խորհել դրանց շուրջ, այնքան լավ: Այդ խնդիրների լուծմանն էապես կնպաստի գրական ստեղծագործություններին ուսուցչի ուղղորդությամբ հաղորդակցվելը: Իսկ ուսուցիչն էլ պետք է աշխատի ոչ թե վերարտադրողական, այլ փոխներգործուն մեթոդներով:

Կարդալու ողջ գործընթացը, ինչպես ցանկացած մտավոր գործունեություն, սերտորեն առնչվում է մտածողությանը:

Մտածողությունը մի շարք բարդ գործողություններից է բաղկացած: Դրանք են՝

- վերլուծություն,
- համադրում,
- զուգորդություն,
- համեմատություն,
- ընդհանրացում,
- դասակարգում:

Լեզվական զանազան վարժություններ և խաղեր մտածողությունը և խոսքը զարգացնելու լավագույն միջոցներ են: Որպեսզի երեխայի մտածողության և խոսքի որակները զարգանան, հարկ է անընդհատ մարզել, հատուկ հասցնել որոշակի մակարդակի: Այս շատ կարևոր խնդրի լուծման համար կարելի է անց կացնել վարժություններ և առաջադրանքներ հետևյալ բաղադրությամբ.

Մտածողության որակների զարգացման համար տրվում են առաջադրանքների հետևյալ տեսակները՝

- համեմատություն. տարբեր երևույթների, հերոսների, ստեղծագործությունների, բառերի, արտահայտությունների համեմատություն, դրանց նմանության և տարբերության հայտնաբերում
- դասակարգում յամ խմբավորում. առաջարկվում է խմբավորել կամ առանձին սյունակներում դասավորել նույն հատկանիշն ունեցող բառեր, արտահայտություններ, ստեղծագործություններ կամ երևույթներ
- ավելորդի հայտնաբերում և առանձնացում, տրվում են բառեր. երեխան պիտի հայտնաբերի, թե որ բառն է այդտեղ ավելորդ, իր տեղում չէ
- մասերից դեպի ամբողջական պատկեր. նույն թեմայի շուրջ առանձին-առանձին նկարներ են տրվում, երեխան պիտի գտնի դրանց հերթականությունը և ամբողջական պատմություն հորինի դրանց շուրջ
- դատողական բնույթի առաջադրանքներ. ուսուցիչն առաջարկում է քննել լսածը կամ կարդացածը,կարծիք հայտնել, դատողություններ անել, դեպքերի, գործողությունների զարգացման, հերոսների արարքների վերաբերյալ, ինչպես նաև լեզվական զանազան առաջադրանքներ, որոնց լուծումը հենվում է դատողական եզրահանգումների վրա:

Սահուն կարդալու համար անգնահատելի են բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շշուկով ընթերցանությունը: Արտահայտիչ կարդալու ունակության ձևավորմանը նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը, առոգանությունը, կետադրական դերային ընթերցումները և բեմականացումները: Կարդալու նախնական ունակությունների ձևավորման փուլում կարևոր է նկատի ունենալ, որ կարդալիս երեխաների աչքերը տողի վրայով սահում են թռիչքներով, և դրանցից յուրաքանչյուրից հետո առաջանում է որոշակի դադար՝ դիտած տառի կամ տառերի ճանաչման և ընկալման, իսկ հետո՝ հաջորդ քայլում՝ այդ տառերը նախորդներին ձուլելու համար: Այդ ընթերցողական դաշտը հմուտ ընթերցողը տեսնում է աչքի մեկ ընդգրկումով և հետո արագ բառերի «թռչում է» մյուս դաշտը: Դժվարությունն այն է, որ սկսնակ կարդացողը կարդալու նախնական փուլում երկար է կանգնում միևնույն տառի վրա: Այդ երևույթը կանխելու համար անհրաժեշտ է սովորեցնել արագ բառերի «տեղափոխվել» մի տառից մյուսը՝ չմոռանալով նախորդը: Դրանով է հաճախ պայմանավորված կարդալու ընթացքում կմկմալը, երեխան կրկնում է նույն տառը, որպեսզի հաջորդ տառը որոշի, նոր արտաբերի: Այսինքն՝ ժամանակ է շահում բառի շարունակությունը կարդալու համար: Որպեսզի այս գործընթացն անցնի սահուն, արդյունավետ և ճկուն, երեխաներին առաջարկվում են որոշակի բառային բառերի «կաղապարներ», դառնում են պահեստավորված տեսողական նմուշներ: Օրինակ՝

ա) ընդհանուր վանկ ունեցող բառեր՝ կարդալու համար ներմուծելով հետքրքրաշարժ տարրեր.

մա - սուր Նու - նե

սի - ռուն Տա - թև





բ) նվազագույն քանակով տառեր պարունակող բառերի ընթերցում և դրանց օգտագործում բառաշարքերում.

տուն նուշ Անի պար կար

անուն Անուշ տանի պարան կարապ

գ) բառերի «աճեցում» սկզբից կամ վերջից.

միս արի տամ մուր մատ

ամիս տարի ատամ ամուր արմատ

դ) Բառի կազմի մեջ մտնող առանձին տառերի փոփոխություն.

լոր հում շուն մուկ սար

կոր կում տուն ձուկ սուր

Սակայն նպատակադրված՝ պետք է խուսափել կարդալու գործընթացը խաղային մեթոդներով հագեցնելուց, որովհետև, վերջին հաշվով դրանք ոչ թե կարդալու ունակության ձևավորմանն են նպաստում, այլ ընդամենը օգնում են գուշակելով ասել բառի մի մաս: Այս հնարի չարաշահումը վտանգավոր է, որովհետև այդ դեպքում աշակերտի մոտ ոչ թե զարգանում է ընթերցանության ունակություններն ու հմտությունները, այլ ձևավորվում է «գուշակող-ընթերցող», որը խոչընդոտում է կարդալու որակական հատկանիշների ձևավորմանը: Երեխայի մոտ ընթերցանության հանդեպ սեր և հետաքրքրություն ձևավորելու համար ընթերցանությունը պետք է ներկայացնել որպես ազատ ժամանցի կազմակերպման ձև, ոչ թե դպրոցական հանձնարարություն: Սկսնակ ընթերցողի համար դժվար է որևէ հեքիաթ ամբողջությամբ կարդալը: Նրանց մեծ մասը, երբ կարդալիս հանդիպում է դժվարության, կորցնում է հետաքրքրությունը գրքի նկատմամբ և հրաժարվում ավարտին հասցնել այն:

Ընթերցելիս պետք է հետևել, որ երեխան կարդա վանկերով, օրինակ, ոչ թե կ-ա-տ-ու, այլ՝ կա-տու: Այսինքն՝ կարդալու նվազագույն միավորը պետք է լինի վանկը: Երեխայի համար բարդ է հիշել մի քանի տառերի հաջորդականությունը, հատկապես բազմաթիվ տառեր պարունակող բառերը տառ առ տառ դժվար է վերարտադրել, իսկ 2-3 վանկն ավելի հեշտ է հիշել և կապել իրար: Սկսնակ ընթերցողը սկզբնական շրջանում, երբ դեռ լիարժեք չի տիրապետում կարդալու տեխնիկային, հնարավոր է՝ առաջին ընթերցելուց միտքը չհասկանա: Նորից կարդացեք արդեն իսկ ծանոթ տեքստը ու ուշադիր հետևեք մտքին: Կարդացեք բարձրաձայն, որպեսզի բացի աչքերով տեքստը տեսնելուց նաև լսի, այսինքն՝ ինչքան շատ վերլուծի, միանա պրոցեսին, այնքան ավելի լավ կկարողանա ընկալել: Կարող եք նույն տեքստը մի քանի անգամ կարդալ, եթե երեխան ցանկանում է, ու ամեն անգամ ավելի վարժ կստացվի ու կոգևորվի: Եթե այս տարբերակը չի գործում, կարդացեք մեկ-երկու տող ու դադար տվեք: Թող գնա խաղալու, ու մի ժամից նորից կշարունակեք: Ոչինչ, թող

իմաստը չհասկանա, միտքը ընդհատվի, բայց լավացնի կարդալու հմտությունը: Երբ որոշակի կարդալու հմտություն կունենա, արդեն կարող եք ավելի երկար տեքստեր առաջարկել, նաև ուշադրությունը հրավիրեք կարդացվող նյութի իմաստի վրա: Երբ սխալվում է, օրինակ, կատար բառը կարդում է կատու, պետք չէ բարկանալ կամ ծիծաղել, ասել՝ սխալ ես կարդում, այլ առաջարկել նորից կարդալ ուշադիր, քանի որ այլ բան է կարծես գրված: Այդ երևույթը ընթերցանության մեջ կոչվում է կռահման փուլ, այսինքն՝ երեխան, տեսնելով տառերի՝ իրեն ծանոթ հաջորդականությունը, առանց շարունակությունը կարդալու, փորձում է կռահել բառը՝ հաճախ սխալ: Մեծահասակ ընթերցողն էլ բոլոր հնչյունները մինչև վերջ չի կարդում, այլ որոշակի հաջորդականությունից կռահում է բառը, օրինակ, ություն, ական վերջավորությունները մենք չենք կարդում, այլ ճանաչում ենք տվյալ տառերի հաջորդականությունը և հասկանում: Ընթերցանությունը խթանելու համար երեխայի հետ կարելի է մնջախաղ կազմակերպել: Օրինակ՝ թղթի վրա մի քանի բառ գրեք՝ առավելագույնը 5-6 բառ: Երեխային հանձնարարեք բառը մտքում կարդալ և մնջախաղի ձևով բացատրել, իսկ դուք փորձեք գուշակել բառը: Երեխան, ակամայից տարվելով խաղով, չի նկատում՝ ինչպես կարդաց բառերը: Եթե կարողանում է կարդալ բառերը, գրեք երկու բառից կազմված նախադասություններ: Եթե խաղը հետաքրքիր է երեխայի համար, բարդացրեք հանձնարարությունները, ավելի երկար բառեր կամ նախադասություններ գրեք: Երեխաների առջև դրեք փոքր ու հեշտ հաղթահարելի խնդիրներ, որպեսզի չհիասթափվեն:

Ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունը բարձրացնելու հրաշալի միջոց են հեքիաթն ու հանելուկը՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Հանելուկը նպաստում է երեխայի խորհելու, դատելու, կռահելու ունակությունների զարգացմանը, ամրացնում է հիշողությունը, նպաստում ինքնավստահության ձեռքբերմանը, օգնում է բնության երևույթների, շրջապատող իրերի և առարկաների, կենդանական, բուսական աշխարհի մասին ունեցած գիտելիքների շրջանակի ընդլայնմանը, վերացական մտածողության զարգացմանը: Հանելուկի պատասխանը գտնելու համար պահանջվում է որոշակի սրամտություն, որն էլ մարդու լավ ու արագ մտածելու համար հիմք է հանդիսանում:

Անգնահատելի է հեքիաթների դերը: Բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ ընթերցել կամ լսել: Հեքիաթների շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը, գաղափար կազմում բարու և չարի մասին: Հեքիաթն իր հերոսներով, ժողովրդական բառ ու բանով, լեզվամտածողության հատուկ դրսևորումներով հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը,դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի պարզությունը, հաճելի ավարտը, մատչելի ենթատեքստը հեշտացնում են ընթերցումը: Հեքիաթներն ունեն հետաքրքրական դիպաշար (սյուժե): Դրանք երեխայի ամբողջ էությունը համակող ընթերցանության նյութեր են: Հաճախակի կրկնվող բառերի ու արտահայտությունների

շնորհիվ նկարագրվող դեպքերն ու հերոսները արագ և անջնջելիորեն տպավորվում են նրա հիշողության մեջ:

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին ասել է. «Հեքիաթի դասավանդման ամենաքնքուշ հպումն է երեխայի սրտին: Եվ այդ հպումից երեխան կթևավորվի, հեքիաթների կախարդական աշխարհում կթրծվեն նրա միտքն ու հոգին, կնրբանան զգացմունքները»:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

«Մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը»:

Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների, զարգացնող տեխնոլոգիաների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է: Տարրական դպրոցում մայրենիի դասի նպատակներից են երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրության առաջացնելը և ընթերցողական կարողության ձևավորումը և զարգացումը: Եթե բավարար մակարդակով ձևավորված է կարդալու ունակությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ իրականցվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց: Ուսուցման հիմնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու ունակության ձևավորմանը: Դա չի նշանակում, որ դասը պլանավորելիս, դասի նպատակները որոշելիս պիտի առաջնորդվել միայն կարդալու ունակության զարգացմանը միտված նպատակով: «Դասին նախապատրաստվելու տեխնոլոգիան ենթադրում է նպատակի հետ կապված չորս խնդրի լուծում: Որոշել դասի մանկավարժական նպատակը՝ ելնելով դասանյութի հնարավորությունից: Աշակերտի համար որոշել մի այնպիսի ուսումնական գործունեություն, որի դաստիարակչական արդյունքը ուսուցչի նպատակն է, այսինքն՝ ուսուցիչն իր նպատակին կարող է հասնել աշակերտի այդ գործունեության միջոցով: Աշակերտի համար էլ պետք է որոշել մի այնպիսի նպատակ, հանուն որի նա կամավոր է ընդգրկվելու ուսուցչի նախատեսած այդ գործունեության մեջ: Նպատակը որոշելուց հետո պետք է մտածել աշակերտի գիտակցության մեջ այն առաջացնելու մասին: Վերջին խնդրի լուծումն ուսուցիչը կարող է ապահովել արդեն ուսուցման մեթոդների միջոցով»: Բացատրական ընթերցանության մեթոդը բազմաթիվ մեթոդների համալիր է, որի բաղադրամասերի ճիշտ իրականացման դեպքում լուծվում են նաև կարդալու գործընթացի հետ կապված աշակերտների բազմաբնույթ նպատակները: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասն անարդյունավետ և ծանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի իրականացման գործընթացի առանձնահատկությունները: Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայում մշտապես դիտարկվել է բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրամաս՝

Զրույց



Սակայն, չի կարելի խախտել այս բաղադրամասերի հաջորդականությունը, քանզի դրանցից յուրաքանչյուրը նախապատրաստում է մյուսին: «Աշակերտների իմացական գործունեության բնույթը, նրանցից ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության մակարդակն արտացոլվում է ոչ թե մեթոդների դասակարգմամբ, այլ նրանց կատարելության աստիճանով»:

Զրույց: Զրույցի տեսակներն ու կազմակերպան մեթոդիկան: Բացատրական ընթերցանության մեթոդով իրականացվող մայրենիի դասն այդ մեթոդի բաղադրամասերից յուրաքանչյուրի կիրառմամբ անցկացվող մի ամբողջական մանկավարժական գործընթաց է, որի ժամանակ զրույցն իր տեսակներով դառնում է գերիշխող, թեև մեթոդի բաղադրամասերը գործադրվում են հաջորդաբար՝ մեկը նախապատրաստելով մյուսին: Ըստ նմատակների՝ կարելի է տարբերակել զրույցի հետևյալ տեսակները.



Զրույցն, ըստ դասի ժամանակ իրականացման փուլերի, լինում է՝ **նախապատրաստական**, **ուղեկցող** և **ամփոփիչ**:

Նախապատրաստական զրույցը նախորդում է դասագրքում զետեղված ստեղծագործությունների ընթերցմանը: Զրույցի այս տեսակը առավելապես կիրառվում է ԽԻԿ համակարգվող կազմակերպվող ուսումնական գործընթացի խթանման փուլում: Նախապատրաստական զրույցի ընթացքում չպետք է պատմվի ընթերցվելիք ստեղծագործության բովանդակությունը: Ուղեկցող զրույցը նպաստում է ընթերցվող նյութի բովանդակության հասկացմանը և կիրառելի է իմաստավորման փուլում: Մայրենիի յուրաքանչյուր դաս ավարտվում է ամփոփիչ զրույցով, որի ժամանակ երկխոսությունների ճանապարհով ամփոփվում են ստեղծագործության հիմնական բովանդակությունը, զրույցի այս տեսակը կիրառվում է կշռադատման փուլում:

Զրույցը, ըստ անցկացման ձևի, լինում է՝ **հարցազրույց, կատեխեզիսային, բացատրական կամ մեկնողական և էվրիստիկ**: **Հարցազրույցի** ժամանակ ուսուցիչն աշակերտներին դիմում է նախապես մշակված հարցերով և ունկնդրում նրանց պատասխանները, այսինքն՝ զրույցը վարվում է հարց ու պատասխանի միջոցով: **Կատեխեզիսային** զրույցի ժամանակ երեխաները ոչ միայն կպատասխանեն ուսուցչի հարցերին, այլև իրենք հարցեր կտան, կարծիքներ ու տեսակետներ կհայտնեն: **Բացատրական կամ մեկնողական** զրույցի անցկացման ժամանակ ուսուցիչը մատչելի տեղեկություններ է հայտնում նոր նյութի մասին, կամ հարցերի միջոցով բացահայտում է այն տեղեկությունները, որոնք ունեն աշակերտները: **Էվրիստիկ** զրույցի ժամանակ ուսուցիչը

նյութը ներկայացնում է ոչ թե պատրաստի ձևով, ավարտուն, այլ աշակերտները հարցերի օգնությամբ իրենք են հայտնաբերում գիտելիքը, կատարում եզրահանգումներ:

Բնագրի ընթերցում: Կարդալու տարրական կարողության ձևավորումը: Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝ **վերլուծական, համադրական և ավտոմատացված**:



Առաջին՝ վերլուծական փուլում, տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը՝ նայած ընթերցողը վանկերով է կարդում, թե տառերով: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը. ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ ավտոմատացված կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է. ընթերցողը կարդում է նախադասություններով:

Կարդալու որակական հատկանիշները: Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Լավ կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ, որոնք սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Լավ կարդալու որակներն են.



Կարդալու տեսակները: Դրանց դերը կարդալու որակական հատկանիշների ձևավորման գործում: Տարրական դասարաններում արդարացված և ընդունված է ձայնով կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը: Ձայնով կարդալը լինում է 2 տեսակ՝ բարձրաձայն և ցածրաձայն: Բարձրաձայն ընթերցանությունը կոլեկտիվ աշխատանք կատարելու (կարդալ շարունակելով, ընտրովի, դերերով և այլն) անփոխարինելի միջոց է: **Լուռ** կարդալը մտքում կարդալն է, որն իրականացվում է դասարանում՝ ուսուցչի հսկողության ներքո (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցության): **Շարունակելով** կարդալ, երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջը ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով: **Բացատրելով կամ մեկնաբանելով** կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը: Ընտրովի ընթերցանությունը պիտի նախորդի **դերերով ընթերցանությանը,** այս ընթերցանության ժամանակ ընթերցանությունը կազմակերպվում է բնագրում հերոսների քանակին համապատասխան՝ չմոռանալով հեղինակին: Դերերով կարդալիս պետք է պահպանել մի քանի պայման՝ դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ, որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի կամենում այն կատարել, երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին:

Բազմակի ընթերցանության ժամանակ երեխաների հետաքրքրությունը բորբոքվում է ոչ միայն բազմաբնույթ առաջադրանքների, այլև ծավալված մտավոր գործունեության նկատմամբ ուսուցչի ցուցաբերած օգնությամբ, հետաքրքրությամբ: Այսպիսով՝ ստեղծագործության բազմակի ընթերցանությունն իրականացվում է կարդալու տարբեր տեսակներով ՝ հետևյալ հաջորդականությամբ.

- Շարունակելով
- Մեկնաբանելով
- Ընտրովի
- Դերերով

Բառային աշխատանք: Բառը լեզվի կարևորագույն միավոր է, առարկայի, երևույթի, հասկացության, զգացմունքների և այլ արժեքների իմաստակիրը: Տարրական

դասարաններում անծանոթ բառերի ու բառակապակցությունների բացատրման արդյունավետ միջոցներից են զննական պարագաները, բառը նկարով բացատրելը և այլն: Բառերի բացատրման ամենատարածված ձևերից մեկն էլ բառը հոմանիշով փոխարինելն է, երբ անծանոթ բառի փեխարեն գործածվում է երեխաներին ծանոթ բառը՝ հոմանիշը: Բառակապակցություն խոսքայի միավորի գիտակցական ըմբռնման գործընթացը պիտի իրականացնել հետևյալ քայլերով՝

- **Խոսք կառուցելու ընթացում բառակապակցության դերի գիտակցում** - պատրաստի տեքստից բառակապակցությունների առանձնացում, դրանց բաղադրամասերի միջև գոյություն ունեցող կապերի բացահայտում, ինքնուրույն կազմած բառակապակցությունները խոսքում գործածելու կարողության ձևավորում:
- **Կարդացած բնագրի գաղափարի, հեղինակի գործածած բառակապակցությունների իմաստային նրբերանգների ընկալում և իմաստավորում** - նախ հարցերի օգնությամբ, ապա առանց դրանց նախադասության բառերի կապակցության ու դրանց ձևերի որոշում:
- **Կարդացած բնագիրը որպես տեքստ ընկալելու, դրա շուրջ որոշակի գրականագիտական աշխատանք կատարելու կարողության ձևավորում**- նախադասության մեջ բառակապակցության իմաստավորելու, դրանց միջոցով ստեղծագործության գործող անձանց ներկայացնելու, բնութագրելու ունակությունների ձևավորում:
- **Նախադասության անդամների բովանդակային միասնության ըմբռնում և ըստ այդմ՝ նախադասության արտասանական երանգավորման ճիշտ ընտրություն** - եթե աշակերտը ձեռք է բերել նախադասության կազմի մեջ մտնող բառակապակցությունների ներիմաստային կապերն ընկալելու ունակություն, որոշում է բառակապակցության արտասանական երանգավորման տարատեսակները, նշանակում է՝ նա կարող է արտահայտիչ կարդալ և խոսել:
- **Նախադասության կազմության քերականական ձևի ուսումասիրումը** - եթե աշակերտը կարողանում է որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառակապակցությունները, ճիշտ հարցադրումներ կատարել, որոշել գլխավոր և երկրորդական անդամները, նշանակում է՝ նա պատրաստ է յուրացնելու շարահյուսությունից ուսուցման տվյալ օղակի համար մայրենիի ծրագրով նախատեսված գիտելիքներն ու ունակությունները:

Բնագրի շուրջ աշխատանքը որպես ընթերցողական կարողության ձևավորման միջոց: Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, երբ ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն

մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսք գնալու: Կարդալու ընթացքում, երբ ընթերցողն անընդհատ վերընթերցում է նյութը, այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել, հասկանալ իր ստացած տեղեկատվությունը: Բացատրական ընթերցանության մեթոդի՝ աշխատանք բնագրի շուրջ բաղադրամասի մեթոդապես ճիշտ իրականացումը լուծում է հենց այս կարևոր խնդիրը: Բնագրի շուրջ իրականացվող աշխատանքի ընթացքում պիտի լուծվեն հետևյալ խնդիրները՝

- **Կարդացածը հասկանալու կարողության զարգացում**
- **Վերլուծական-համադրական ունակության զարգացում**
- **Քննադատական մտածողության զարգացում**
- **Կապակցված խոսքի զարգացում**
- **Ընթերցողական հետաքրքրության զարգացում**
- **Գրական տարրական գիտելիքների ձեռքբերում**

Ընթերցած ստեղծագործության բովանդակության վերարտադրում կամ պատմում: Պատմելու ունակության ձևավորումը բավականին բարդ գործընթաց է և մայրենի լեզվի դասի կարևոր փուլ: Ընթերցած նյութի բովանդակությունն աշակերտը կարող է ինքնուրույն պատմել միայն այն ժամանակ, երբ նա հասկացել է կարդացածը, իսկ հասկանալով պատմելուն պիտի նախապատրաստել: Տարրական դասարաններում եզակի դասեր են իրականցվում՝ առանց կարդացածը վերարտադրելու: Տարբեր ձևերով պատմելը, ինչպես նաև դրանց նախապատրաստվելը դասը դարձնում են հետաքրքիր, բազմաբնույթ և նպաստում են աշակերտների խոսքի զարգացմանը: Պատմելու հիմնական տեսակներն են՝

- **Մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել**
- **Համառոտ պատմել**
- **Ընտրովի պատմել**
- **Դատողություններով կամ մեկնաբանելով պատմել**
- **Ձևափոխված պատմել**
- **Ստեղծագործաբար (փոփոխելով դեպքերի ընթացքը) պատմել**
- **Շարունակելով պատմել**
- **Պատմել որպես մասնակից (1-ին դեմքով)**
- **Պատմել որպես ականատես (3-րդ դեմքով)**

Ամփոփում-կշռադատում: Ամփոփումն, ըստ ԽԻԿ համակարգի, կշռադատումն է, որը կարող է իրականացվել ինչպես մեկ դասի որոշակի փուլում, այնպես էլ դասի ավարտին: Մասնավորապես պետք է ամփոփել.

- Նյութի ուսումնասիրությունից սովորողների ստացած ճանաչողական նոր տեղեկությունները, աշակերտների կողմից դրանց նորովի մեկնաբանման ու կիրառման ունակությունները:
- Նյութերից բխող դաստիարակչական-բարոյական հետևություններ անելու ունակությունը:
- Նյութի լեզուն և ոճը՝ բառերը, դարձվածքները, արտահայտություններն ու լեզվական այն ձևերը, որոնք ուսուցման օբյեկտ են դարձել:
- Դրանց նորովի մեկնաբանման ու կիրառման ուղղությամբ երեխաների ձեռք բերած ունակությունները:

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության ստեղծագործական ունակությունները:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգևոր աշխարհը, կյանքը լցնում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է՝ հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Խաղը նպաստում է երեխայի շփման, հաղորդակցման ունակությունների զարգացմանը, կամային վարքի ձևավորմանը, ինքնահսկման, ստեղծագործական երևակայության պահանջմունքադրդապատճառային ոլորտի ձևավորմանը, կամային հիշողության զարգացմանը:

Խաղ 1. «Վանկախաղ»

Խաղի նպատակները. ամրակայել երեխաների կարդալու ունակությունը, բեռնաթափել հոգնածությունը:

Անհրաժեշտ պարագաներ. շրջանաձև կտրտված ստվարաթղթի վրա կտրտված վանկեր՝ (կա, պա, բա, արի, տու, տա, և այլն) և (տա, պի, ժակ, փի և այլն), իսկ շրջագծի ներքևում՝ բռնակ:

Խաղի ընթացքը. Ուսուցչուհին նախ՝ ձախ ձեռքով բարձրացնում է բառի առաջին վանկը (պա), ապա՝ աջ ձեռքով բարձրացնում է երկրորդ վանկը (պի): Երեխաները կարդում են դրանք առանձին-առանձին:

Ապա վանկերը մոտեցնում են իրար: Երեխաները կարդում են ստացված բառը (պապի): Այդպես երեխաները կարդում են պապի, բաժակ, կատու, արփի, բեռերը: Նույն աշխատանքը կարելի է կատարել ցանկացած հնչյուն-տառի շուրջ:

Հետաքրքիր խաղ է, քանի որ այսպես երեխաները վերհիշում են նաև անցած տառերը, յուրաքանչյուր կազմած բառ ենթարկում հնչյունային վերլուծության, կազմում բառեր և կարդում:

Խաղ 2. «Ամբողջացրե՛ք նախադասությունները»

Խաղի նպատակները. զարգացնել հասկանալով կարդալու աշակերտների ունակությունը, մշակել խմբով աշխատելու ունակություն, դաստիարակել համախմբվածություն, համերաշխություն, հանդուրժողականություն:

Անհրաժեշտ պարագաներ. կտրտած նախադասություններով լի ծրարներ (խմբերի թվերին համապատասխան):

Խաղի ընթացքը.

ա. 1-3 հաշվով դասարանը բաժանվում է 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է ծրար, որի մեջ լցված է 2-3 (մասերի բաժանված) նախադասություն:

Բացատրություն. ուսուցիչ.

բ. յուրաքանչյուր խումբ ունի մեկ ծրար: Ծրարում գտնված մտքով իրար հետ կապված նախադասությունները կտրտած են, բաժանված են մասերի:

Հանձնարարական. ամբողջացրե՛ք նախադասությունները և դասավորե՛ք այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի ամփոփ միտք:

գ. երեխաները խմբով աշխատում են, ամբողջացնում նախադասությունները:

դ. յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի կազմածը:

ե. աշխատանքի գնահատում:

Այս խաղի միջոցով երեխաները ձեռք են բերում համագործակցելու, իրենց միտքն արտահայտելու ունակություն, ձևավորում նաև ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն:

Խաղ 3. «Գտի՛ր ավելորդը»

Խաղի նպատակները. խաղը հետաքրքրաշարժ է և երեխաների մոտ ձևավորում է կամային ուշադրություն և սովորում են ուղղագրություն:

Անհրաժեշտ պարագաներ. փուչիկներ, մարկեր:

Ընթացքը. փուչիկների վրա գրված տառերով կազմել բառ և գտնել ավելորդ տառը կամ տառերը:

Այս խաղը թարմացրեց երեխաներին, քանի որ երբ գտան ավելորդ տառը, ծափահարեցին և պայթեցրին ավելորդ փուչիկը:

Խաղ 4. «Հավաքի՛ր պատմությունը»



Խաղի նպատակները. ձևավորել ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն, զարգացնել ուշադրությունը և հիշողությունը, զարգացնել բառակապակցություններ կազմելու ունակությունը:

Անհրաժեշտ պարագաներ. բովանդակային նկար, գունավոր թղթեր, որոնց վրա գրված կլինի նկարի մոտավոր բովանդակությունը:

Խաղի ընթացքը. դասարանը բաժանել այնքան խմբի որքան, որ նկարի պատմության մեջ առկա նախադասությունների քանակն է: Նկարի պատմության յուրաքանչյուր նախադասություն գրել տարբեր գույնի թղթերի վրա (նախադասություններն էլ իրենց հերթին առանձնացնում ենք բառերի): Յուրաքանչյուր խմբի տալ մի գույնով գրված բառեր, որոնցից խումբը պետք է հավաքի նախադասություն, ճիշտ հավաքելու դեպքում արդեն ամբողջական նախադասությունը փակցնում ենք պաստառին: Այսպես հավաքում ենք ամբողջ պատմությունը:

Երեխաները մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ են ընթերցում բառերը, ապա նախադասությունները, որպեսզի կարողանան հավաքել ամբողջ պատմությունը:

Այս խաղի միջոցով հեշտությամբ սովորում են թեմատիկ նկարի շուրջ հյուսված պատմությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցիչները» ինչպես գիտության տեղական լուսատուներ, պետք է իրենց մասնագիտության գծով կանգնած լինեն արդի գիտելիքների լիակատար բարձրության վրա»:

Դ. Ի. Մենդելեև

Գրաճանաչության շրջանում ընթերցել ուսուցանելու գործընթացում «ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորումը» կարևոր դեր ու նշանակություն ունի: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու վերաբերյալ կատարվող աշխատանքներն ամենից առաջ բազմաբնույթ են դարձնում աշակերտների աշխատանքները:

Առաջին դասարանում սովորողի համար որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար այն մի ուրոյն աշխարհ է: Սակայն գաղտնիք չէ, որ երեխայի համար կարդալը մեծ մասամբ հաճելի զբաղմունք և այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ: Այն աշխատատար գործընթաց է: Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում է ոչ թե տառերի կամ վանկերի, այլ բառերի տեսքով: Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում, ինչն էլ նպաստում է անցնել վարժ, սահուն ընթերցանությանը: Սովորաբար աշակերտները գրաճանաչության շրջանում դժվար են կարդում, քան գրում: Այդ դժվարությունները հաղթահարվում են բամաթիվ նպատակասլաց վարժությունների, արդի համագործակցային մեթոդների, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնող խաղերի և գործնական աշխատանքների միջոցով: Երեխան յուրացնում է դասագիրքը և սկսում հասկանալ կարդացածը: Առաջին հերթին հարկավոր է երեխայի հոգում արթնացնել սեր գրքի և ընթերցանության նկատմամբ, ձգտել, որպեսզի գիրք ընթերցելը նրա համար դառնա իսկական հոգեկան պահանջ:

Որքան վաղ է երեխան սկսում կարդալ, այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը և նպաստում ընթերցողական ունակությունների կատարելագործմանը, բառապաշարի հարստացման և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրանց թերի կմնա անհատի ինքնակրթությունը:

Հիմնվելով երեխաների ունեցած փոձի վրա՝ անհրաժեշտ է գրաճանաչության շրջանում խստագույնս հետևողական լինել և արհեստավարժ ձևով խնդիրներին լուծում տալ.

- ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և զարգացում,

- ընթերցանության սերմանում,
- գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու և վերլուծելու ունակության զարգացում,
- կրտսեր դպրոցականի բարոյականային արժեքների և գրական ճաշակի ձևավորում,
- ձեռք բերած գիտելիքների ընդլայնում և խորացում,
- սովորողների հետաքրքրությունների ձևավորում,
- աշակերտների ճանաչողական գիտելիքների ձեռքբերում և այլն:

Ժամանակակից ուսուցման մեջ խրախուսվում է փոքր խմբերով համագործակցային աշխատանքը: Դասապրոցեսում ընդգրկվում են բոլոր երեխաները: Չկան ուժեղ և թույլ երեխաներ: Նրանցից յուրաքանչյուրն զգում է աշխատանքի և մասնակցության կարևորությունը: Կատարվում է թիմային աշխատանք: Խմբային աշխատանքը երեխաներին սովորեցնում է համագործակցել սիրով, օգնել միմյանց, չմնալ ստվերում:

Նույն բնագրի շուրջ տարևաբնույթ աշխատանքներ կատարելով՝ աշակերտը ձեռք է բերում ոչ միայն լավ և հասկանալով ընթերցելու ունակություն, այլև չի մարում նրա ընթերցելու ցանկությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Խաղը երեխայի համար ոչ թե խաղ է, այլ իրականություն»:

Ուշինսկի

- Առաջարկում եմ գրաճանաչության շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու համար առաջնորդվել ուսուցման ժամանակակից լավագույն մեթոդներից մեկի՝ խաղի և համագործակցային մեթոդներով:
- Դրպոցներն ունենան ընթերցասերի խմբակ, որտեղ կկազմակերպվեն տարաբնույթ աշխատանքներ և ընթերցասեր աշակերտները կխրախուսվեն:
- Ծնողական ժողովների ժամամանակ ծնողների ուղղորդել, որ կազմակերպվեն «Ընտանեկան ընթերցանության օր»՝ երեխայի ցանկությամբ որևէ հետաքրքիր նյութ ընտրելով և ընթերցելով:
- Ուսուցիչների համար ստեղծված մեթոդական ձեռնարկներում և հոդվածներում կարևորել հատկապես կարդալու տարրական ունակության դժվարությունների հաղթահարմանը նպաստող մեթոդական ցուցումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ձ., Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2018:
2. Գյուլամիրյան Ձ., Հ., «Խաղալով սովորենք», Ե., 2009:
3. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Ե., 1978:
4. Սարգսյան Վ., Այբբենարան-մեթոդական ձեռնարկ, Ե.,2006:
5. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Ե., 2015:
6. Ղարիբյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1955:
7. Գյուլամիրյան Ձ., Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., 1998:
8. Սուխոմլիսնկի Վ., Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Ե., 1977: